ՏԵՂԵԿԱՆՔ

2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի փոփոխվող հոդվածների մասին

Հոդված 426. Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ ապօրինի ձեռք բերած անձի կողմից դրանք հրապարակելը

1. Պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հրապարակելն այն անձի կողմից, որն այդ տեղեկությունը ձեռք է բերել հափշտակելու, սպառնալիքի, բռնություն գործադրելու, խաբեության կամ այլ ապօրինի եղանակով, եթե բացակայում են սույն օրենսգրքի 418-րդ, 424-րդ կամ 427-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ ~~մեկից չորս~~ **երկուսից** **հինգ** տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:»:

Հոդված 427. Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելը

1. Պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հրապարակելն այն անձի կողմից, որը դրա հետ ծանոթանալու իրավունք ուներ, եթե բացակայում են սույն օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ ~~մեկից չորս~~ **երկուսից** **հինգ** տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն ~~անզգուշությամբ~~ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ~~երեքից վեց~~ **չորսից ութ** տարի ժամկետով:

Հոդված 428. Պետական գաղտնիք պարունակող տեղեկություններն անզգուշությամբ հրապարակելը

1. Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունն անզգուշությամբ հրապարակելն այն անձի կողմից, որը դրա հետ ծանոթանալու իրավունք ուներ, **<u>եթե դրա հետևանքով խոշոր չափի գույքային կամ այլ էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին՝</u>**

պատժվում է տուգանքով՝ ~~առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով~~ **<u>տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:</u>**

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն ~~անզգուշությամբ~~ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ~~ազատազրկմամբ՝ մեկից երեք~~ **<u>ազատազրկմամբ՝ երկուսից հինգ</u>** տարի ժամկետով:

Հոդված 429. Պետական գաղտնիք պարունակող փաստաթղթեր, առարկաներ կամ համակարգչային տվյալներ ոչնչացնելը կամ վնասելը

1. Պետական գաղտնիք պարունակող փաստաթուղթ կամ պետական գաղտնիքի մասին տեղեկություն պարունակող այլ առարկա ապօրինի ոչնչացնելը կամ վնասելը կամ պետական

գաղտնիք պարունակող համակարգչային տվյալն ապօրինի ոչնչացնելը, վնասելը կամ ուղեփակելը (մեկուսացնելը), որն առաջացրել է այդ տվյալի կամ առարկայի կորուստ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

Հոդված 430. Պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի, առարկաների կամ համակարգչային տվյալների հետ վարվելու կանոնները խախտելը

1. Պետական գաղտնիք պարունակող փաստաթղթի, այլ առարկայի կամ համակարգչային տվյալի հետ վարվելու կանոն խախտելն այն անձի կողմից, որը պարտավոր էր պահպանել այդ կանոնը, եթե դա անզգուշությամբ առաջացրել է այդ փաստաթղթի, այլ առարկայի կամ համակարգչային տվյալի կորուստ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: